



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

« 03 » հոկտեմբերի 2018 թվականի N: 304-Վ ք.Գյումրի

ԳՈՒ ԵՂՈՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ԷՆՐԻԿՈ ՄԱՏՏԵԻ ԱՆՎԱՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին մասի «թ» կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 7-ի N:992-Ն որոշմամբ հաստատված «Առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի օրինակելի կարգի» 6.2-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Գոռ Եղոյանի 2018 թվականի հոկտեմբերի 2-ի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Գոռ Եղոյանին 2018 թվականի հոկտեմբերի 3-ից նշանակել «Գյումրու Էնրիկո Մատտեի անվան պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնակատար՝ մինչև այդ պաշտոնում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքներով տնօրենի պաշտոնի նշանակումը:

Իսկականի հետ ճիշտ է



Կ.ՍԱՐՈՒԿՄԱՆՅԱՆ